ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՀՊԳ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ

22.08.2017 14:27

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ է նշանակվել փաստաբան Լյուդվիկ Դավթյանը: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի նախկին տեղակալ Վարսեր Կարապետյանը Միացյալ Նահանգներում վերապատրաստվելու (Fulbright scholar program) նպատակով ազատվել էր աշխատանքից:

Ներկայացվում է Լյուդվիկ Դավթյանի համառոտ կենսագրությունը:

Լյուդվիկ Դավիթի Դավթյանը ծնվել է 1984թ. հուլիսի 4-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում:
2005թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, 2007թ.՝ մագիստրատուրան: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա (Իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարակության և կրիմինալիստիկայի ամբիոն):
2007-2008թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի Եվրոպական ինտեգրացման բաժնում որպես մասնագետ:
2008-2009թթ. հրավիրվել է Շվեյցարիայի Լոզանի համալսարանի իրավագիտության և քրեական գիտությունների ֆակուլտետ՝ թեկնածուական ատենախոսության թեմայով գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:
2010թ. ԵՊՀ խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (թեմա՝ «Հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հետազոտումը՝ հեղինակին պարզելու նպատակով»):

2010-2011թթ. աշխատել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում որպես իրավախորհրդատու՝ միաժամանակ դասավանդելով Երևանի Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայում:
2011-2012թթ. օգոստոսին հրավիրվել է Շվեյցարիայի Լոզանի համալսարանի իրավագիտության և քրեական գիտությունների ֆակուլտետի Դատական փորձագիտության ինստիտուտ՝ որպես հրավիրված դասախոս գիտական հետազոտությունները շարունակելու նպատակով: Շվեյցարաիայի Համեմատական իրավագիտության ինստիտուտի փորձագետ է:
2012թ. հուլիսից ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:
Լյուդվիկ Դավթանը մի շարք գիտական հոդվածների, ձեռնարկների և այլ գիտական աշխատանքների հեղինակ և համահեղինակ է:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })